



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

6 հուլիսի 2018 թվական N 42-Ա

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով

կարգադրում եմ՝

1. Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման համար ՀՀ Տավուշի մարզպետարանի պատասխանատու անձ նշանակել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ Տիգրան Աշոտի Թամրազյանին:
2. Հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձի տվյալները տեղադրել ՀՀ Տավուշի մարզպետարանի պաշտոնական կայքէջում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

7/6/2018

X



6 հուլիսի 2018թ.
ք. Իջևան